**«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր**

**Ստեղծագործ անհատի կրթական պատվերի մոբիլ դպրոց**

6-9-րդ դասարաններ

| Բովանդակություն | VI | | VII | | VIII | | IX | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. | Շաբ. | Տար. |
| **Հանրակրթական բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Մայրենի | 6 | 216 | | | | | | |
| Հայոց լեզու | | | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Գրականություն | | | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Անգլերեն | 3 | 108 | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Ռուսերեն | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Մաթեմատիկա | 4 | 144 | | | | | | |
| Հանրահաշիվ | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Երկրաչափություն | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Բնագիտություն | 2 | 72 | | | | | | |
| Քիմիա | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Ֆիզիկա | | | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Կենսաբանություն | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Աշխարհագրություն | | | 1 | 36 | 1 | 36 | 1 | 34 |
| Պատմություն | 1 | 36 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Հասարակագիտ. | | | | | 1 | 36 | 1 | 34 |
| Երաժշտություն, պար | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Տեխնոլոգիա | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| Մարմնամարզություն | 3 | 108 | 3 | 108 | 3 | 108 | 3 | 102 |
| Առավոտյան ընդհանուր պարապմունք | 2 | 72 | 2 | 72 | 2 | 72 | 2 | 68 |
| **Դպրոցական բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Սովորողի ընտրած գործունեություն | 4 | 144 | 4 | 144 | 4 | 144 | 4 | 136 |
| Ընդամենը | 31 | 1116 | 34 | 1224 | 34 | 1224 | 35 | 1190 |
| **Անհատական բաղկացուցիչ** | | | | | | | | |
| Ինքնակրթություն, տնային ուսումնական աշխատանք | | | | | | | | |
| Շտկողական դասընթացներ | | | | | | | | |
| Լրացուցիչ կրթություն | | | | | | | | |

## Ուսումնական պլանի պարզաբանումներ

1. Ուսումնական պլանը «Ստեղծագործ անհատի կրթական պատվերի մոբիլ դպրոց» (պետական այլընտրանքային) կրթական ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելվածն է:
2. 6-9-րդ դասարան ընդունվում է համապատասխան դասարանի սովորողը, որ իր ծնողի հետ ընտրում է Ծրագիրը, և ծնողը սահմանված կարգով կնքում է պայմանագիր ուսումնառության մասին:
3. Դասարանում սովորողների թիվը 20-25 է: Սովորողի ընտրությամբ գործունեության դասընթացները կազմակերպվում են 12-22 հոգիանոց խմբերով:
4. Ուսումնական պլանի պարզաբանումներում նշված կարգերը ուսումնական պլանի հավելվածն են: Դրանցում փոփոխությունները դպրոցի ղեկավարի ներկայացմամբ հաստատում է կրթահամալիրի տնօրենը:
5. Ուսումնական առարկաները կազմված են դասընթացներից: Ուսուցումը կազմակերպվում է նաև ուսումնական նախագծերի մշակման և իրականացման միջոցով: Ուսուցման կազմակերպման մեջ սահմանված կարգով կիրառվում են առկա, նաև առցանց, հեռավար, տնային ուսուցման ձևեր:
6. Սովորողի առաջադիմությունը, ուսումնական արդյունքները, սովորողի մասին անհրաժեշտ այլ տեղեկություններ սահմանված կարգով էլեկտրոնային գրանցում են ստանում:
7. Ուսումնական տարին կազմակերպվում է կրթահամալիրի տարեկան ուսումնական օրացույցով: Դրանով որոշված ճամբարների, ուսումնական ստուգատեսների, ստեղծագործական հավաքների, Հանրակրթական դիջիթեքի, ծեսերի և տոների սահմանված կարգով մասնակցությունը պարտադիր ուսումնական աշխատանք է:

8. Ուսումնական շաբաթը 6-օրյա է: Շաբաթ օրերը հատկացվում են հայրենագիտական, ուսումնական ճամփորդությունները, ուսումնական-հասարակական նախագծերը, լրացուցիչ կրթության պարապմունքները կազմակերպելուն:
9. Ուսումնական օրն սկսվում է Ծրագրի 15 րոպե տևողությամբ առավոտյան ընդհանուր պարապմունքով՝ սահմանված կարգով և ծրագրով: Պարապմունքի կազմակերպումը սովորողների ուսումնական-հասարակական նախագիծն է:
10. Ուսուցումը կազմակերպվում է ուսուցողական թվային միջոցների կիրառմամբ: Դասավանդողը և սովորողը դպրոց են գալիս անհատական նեթբուք-նոթբուքով կամ համապատասխան ուսումնական գործառույթ ունեցող այլ թվային գործիքով. տանն ունեն համացանց: Ծրագիրը դպրոցում ապահովում է համացանցից, համակարգչից, էլեկտրոնային գրատախտակից, էլեկտրոնային գրիչներից, ձայնագրիչից, ֆոտոխցիկից, բջջային հեռախոսից ուսումնական նպատակներով օգտվելու հնարավորություն: Ուսումնական առաջադրանքները և դրանց պատասխանները ներկայացվում են էլեկտրոնային եղանակով:
11. Սովորողը և դասավանդողը կրթահամալիրի գրադարանի, այդ թվում՝ մեդիանյութերի և միջոցների բաժանորդն են և ստեղծողը: Գրադարանը սովորողին և ուսուցչին սահմանված կարգով տանը և դպրոցում ապահովում է անհրաժեշտ ուսումնական տպագիր և էլեկտրոնային նյութերով, միջոցներով:
12. Կրթահամալիրի, դպրոցի կայքերին հետևելը և դրանց աշխատանքին մասնակցելը սովորողի պարտադիր ուսումնական աշխատանք է:
13. Ուսումնական պարապմունքների բացօթյա կազմակերպումը դիտվում է որպես սովորողի իրավունքների իրագործում:
14. Սահմանված կարգով իրականացվող ուսումնական ճամփորդությունները դասընթացների բաղկացուցիչն են: Սովորողի մասնակցությունը այդ ճամփորդություններին պարտադիր է:
15. Սովորողը սահմանված կարգով մասնակցում է շրջապատի կամ նյութական միջավայրի բարելավմանն ուղղված նախագծերի իրականացմանը: Աշխատանքն ստանում է համապատասխան գրանցում:
16. Սովորողը սահմանված կարգով մասնակցում է պարտադիր ինքնասպասարկմանը՝ հիգիենիկ պահանջների պահպանում, ուսումնական տարածքի և գույքի խնամք: Այդ աշխատանքն ուսումնական ծանրաբեռնվածության մաս չի կազմում: Աշխատանքն ստանում է համապատասխան գրանցում:
17. Ուսումնական բլոգի վարումը սովորողի համար պարտադիր ուսումնական աշխատանք է:
18. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքով, տևական շրջան Հայաստանից բացակայած սովորողների համար կրթական ծրագիրը սահմանված կարգով կարող է կազմակերպվել որպես անհատական ուսումնական պլանով ու ծրագրերով ուսուցում:
19. «Հայոց լեզու, գրականություն» բնագավառի դասընթացներն ուղղված են սովորողի գրավոր և բանավոր խոսքի մշակմանը, սովորողի ուսումնական ողջ գործունեության ընթացքում անհրաժեշտ լեզվական հմտությունների զարգացմանը: Գրականության բովանդակությունը ներառում է գրական արևելահայերեն, արևմտահայերեն, միջին հայերեն, գրաբար ստեղծագործություններ: Գրաբարը ուսուցվում է նաև որպես հայ առաքելական եկեղեցական ծեսի լեզու:
20. «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը ներկայացվում է «Մաթեմատիկա», «Երկրաչափություն», «Հանրահաշիվ» առարկաներով, «Տեխնոլոգիա» առարկայում ներառված «Գծագրություն» դասընթացով:
21. «Կենսաբանություն» առարկան կազմված է «Բուսաբանություն», «Կենդանաբանություն», «Մարդու անատոմիա» դասընթացներից, որոնք ներառում են էկոլոգիայի բաղկացուցիչ և ուսուցանվում փորձի հիման վրա:
22. Բնագիտությունը ներառում է գիտելիքներ էկոլոգիայից, ֆիզիկական աշխարհագրությունից, կենսաբանությունից, ֆիզիկայից, աստղագիտությունից, քիմիայից: Բնագիտության ուսուցումը կազմակերպվում է լաբորատոր պայմաններում, փորձի հիման վրա և բնագիտական ու բնապահպանական աշխատանքների, բույսերի և կենդանիների խնամքի ձևով:
23. «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաների ուսուցումը կազմակերպվում է լաբորատորիաներում՝ փորձի հիման վրա, ՏՀՏ օգտագործմամբ:
24. Սովորողը հանրակրթական դասընթացների և իր ընտրությամբ գործունեության ժամանակ գործնականում կիրառում է օտար լեզուներ:
25. «Տեխնոլոգիա» առարկան կարող է կազմակերպվել փոքրաքանակ խմբերով, գործնական աշխատանքի ձևով կազմակերպվող «Մեդիատեխնոլոգիաներ», «Տնային տնտեսվարություն», «Դիզայն», «Գծագրություն», «Առողջագիտություն և առաջին բուժօգնություն» «Թվային միջոցների սպասարկում», «Դիզայն-խեցեգործություն» դասընթացներից:
26. «Արվեստ» առարկան ընդգրկում է կինոդիտում, թատրոն, թանգարաններ և վիրտուալ ցուցադրություններ, ծեսի, տոնի կազմակերպում և երաժշտություն:

27. «Հասարակագիտություն» առարկան ընդգրկում է «Բարոյագիտություն», «Մարդու իրավունք» բաղադրիչները:
28. «Ֆիզկուլտուրա և անվտանգ կենսագործունեություն» առարկան կազմված է սովորողի ընտրած մարզաձևի թիմային պարապմունքներից և արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ հմտությունների ուսուցման դասընթացից:
29. Սովորողը սահմանված կարգով իր ընտրությամբ գործունեությունն է իրականացնում՝ բնագիտական գործունեություն, ինժեներական-տեխնիկական ստեղծագործություն, կինո-ֆոտոգործ, մեդիալրագրություն, օտար լեզու և թարգմանչություն, մաթեմատիկոսի գործունեություն, կենդանիների և բույսերի խնամք, կերպարվեստ, դիզայն և մոդելավորում, երաժշտական գործունեություն, տեխնոլոգիա-դիզայն, մարզական գործունեություն, թատրոն:
30. Սովորողը տնային առաջադրանքներ և ինքնակրթության աշխատանքի խորհրդատվություն կարող է ստանալ ըստ իր անհատական ուսումնական պլանի:
31. Լրացուցիչ կրթության՝ օտար լեզվի (անգլերեն, վրացերեն, ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն), մաթեմատիկայի, տեխնիկական ստեղծագործության, ֆիզիկայի, քիմիայի, աստղագիտության, էկոլոգիայի, կինո-ֆոտոգործի, համակարգչային գրաֆիկայի, համակարգչային կիրառական ծրագրերի, էլեկտրոնային գրատախտակի, դաշնամուրի, ազգային նվագարանի, վոկալի, պարի, կերպարվեստի, քանդակի, խեցեգործության, կարուձևի, կարպետ-գոբելենի, փայտամշակում-մետաղամշակման, ծաղիկների և բույսերի մշակում-ձևավորման, խոհարարության, շախմատի, մարզաձևի (լող, ֆուտբոլ, բասկետբոլ, ձեռքի գնդակ, վոլեյբոլ, սեղանի թենիս, գեղարվեստական մարմնամարզություն, թեթև ատլետիկա) և այլ դասընթացների կազմակերպման համար սովորողի ծնողի հետ կնքվում է լրացուցիչ կրթության պայմանագիր՝ որպես ուսումնառության պայմանագրի հավելված:
32. Ուսումնական պլանի և ուսումնական ծրագրերի կատարողականն արտացոլվում է դպրոցի ղեկավարի, դասավանդողների և սովորողների ուսումնական բլոգներում և սահմանված կարգով ներկայացվող էլեկտրոնային կիսամյակային հաշվետվություններում:
33. Կիրառվում են գնահատման տարբեր ձևեր, որոնք բերվում են 10 միավորանոց համակարգի կամ ելնելով առարկայի առանձնահատկությունից՝ ստուգված, չստուգվածի: Գնահատման հիմքում դրվում են սովորողի անհատապես և խմբով կատարած աշխատանքների թղթապանակը (այդ թվում՝ ինքնաստուգումներ, ընթացիկ և կիսամյակային ամփոփիչ ստուգումներ, հեռավար առաջադրանքների կատարում, հետազոտական-ստեղծագործական աշխատանք, ուսումնական կայքի աշխատանք, ուսումնա-հասարակական նախագծեր, ուսումնական ճամփորդություններ, հայրենագիտական արշավներ, ստեղծագործական ստուգատեսներին, հավաքներին, ցուցահանդեսներին, փառատոներին մասնակցություն, լրացուցիչ կրթություն), կիսամյակային հաշվետվությունները: Խրախուսվում է սովորողի ուսումնական գործունեության ինքնահսկման և ինքնաստուգման ձևերի կիրառումը և հրապարակայնացումը մեդիայի միջոցով:
34. Սովորողի ստեղծած այլ տեսակի արդյունքները սահմանված կարգով ներկայացվում են ցուցադրություններում, ցուցահանդեսներում, ստեղծագործական հավաքներում:
35. Ուսումնական տարվա վերջում անց է կացվում «Ես կարողանում եմ» ստուգատեսը:
36. 9-րդ դասարանի վերջում սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝ ԿԳ նախարարության սահմանած կարգով: